կարծես խոր թմրութեամբ պաշարուած և գլուխները կախուց բարձի վերայ պինդ մնած քաղցր քնում են, թէպէտ բարեպաշտօն Ընկերութիւնը յիշեալ Դպրոցի առ հասարակ քահանայորդւոց և քահանայացու դպրաց համար առատ պաշարեղէններ է պատրաստում Հառիճ, և բացի նորան՝ ամենայն ջան ի գործ դրած Հոգևոր Կառավարութեան միջնորդութեամբ անդադար գրգռումէ բոլորին ևս, որ այսպէս ակամայ կամօք և դանդաղ չշարժուին՝ այլ խնայեն անգին ժամանակի կորստեանը։

Այս մեր անպաճոյճ մի քանի տող գրութիւնը ուղղելով Խմբագրութեանդ Արարատայ՝ խնդրեմ հիւրընկալնել պատուական ամսագրոյդ էջերում, յուրախութիւն բազմահոգ սրտի Ազգախնամ սուրբ Հայրապետի, ի քաջալերութիւն միւս ուսուցչաց Ձայնագրութեան, պատուելի ընկերաց Պ. Յովհաննու Մկրտչեան, ի պարծանս բարեպաշտօն Ընկերութեան Հառիճոյ վանից, որք ամենայն դժուարութեանց տոկալով և տառապակիր աշխատութեամբ՝ մեծամեծ ծախուք սպասում էին այսպիսի մի մխիթարիչ և փառաւոր ապագայի և հետևապէս ի յորդոր և ի խրախոյս մեր պատուարժան եկեղեցական դասուց։

ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԵԱՆ ՔԱՅԻՆԴՈՒՐՑԻ.

Ի 15ն Դեկտեմբերի 1875 —ի

յԱլէքսանդրապօլ։

Ի ՇԱՄԱԽԻՈՅ

Շամախւոյ Վիճակին Արժ. Թեմական Վերատեսուչ Սահակ Վարդապետ անցեալ տարւոյ վերջերում՝ Վիճակին Հայոց Հոգևոր մի քանի Դպրոցաց վերայ հսկելոյ և այլ կարևոր հոգացողութեանց համար շրջագայելով՝ յանուն Վեհ. Հայրապետի գրած տեղեկագրէն հետևեալ ծաղկաքաղ պարբերութիւնքը հրատարակել կարևոր կհամարիմք։

«Զդպրոցն Դուրայու գտի ոչ յայնքան բաւականացուցիչ դրութեան ըստ արտաքին կառավարութեանն ի պատճառս թուլութեան և անտարբերութեան . . . . Թիւ ուսանողաց ի նմա էին երեսուն և երեք. մուտք դպրոցին ոչ աւելի քան զհինգ հարիւր րուբլիս, որք գոյանան ի տոկոսեաց երկու հազար երեք հարիւր երեսուն և երեք րուբլի ուսումնարանապատկան մայր գումարաց և յայլ և այլ նուիրատուութեանց. ծախք նորին հաւասար են մտից. ուսուցիչ կրօնի և երգեցողութեան են տեղական քահանայք. իսկ միւս մնացեալ առարկայից՝ Շուշեցի Սմբատ Ղալաբեկեանց. զկարևոր կարգադրութիւնս ի ներքին և յարտաքին բարւոք և յարգիւնաւէտ կառավարութիւն այսր դպրոցի արարի և յայտնեցի Կոնսիստորիայի տեղւոյս ի գիտութիւն.

Հայ ժողովրդականք Դուրայու, յորոց ընիկք թէ արականք և թէ իգականք են քառասուն և վեց, իսկ օտարականք չորս հարիւր յիսուն և վեց, ...

Երկրորդ՝ յայց ելի և գեղջն Խաչմազու, որ անկանի յարևմտակողմն Դուրայու քսան և հինգ վերստ հեռաւորութեամբ, շրջապատեալ տաճկական գիւղօրէիւք, ուրանօր տունք Հայոց են քսան և եօթն. հայ ժողովրդականք տեղւոյս առ անգիտութեան հայ բարբառոյ ի գործ ածեն զտաճկացն բարբառ և կեան ըստ տարազու կենցաղավարութեան նոցա, թողում ասել թէ բազումք ի նոցանէ չգիտեն և զխաչակնքել ի դէմս իւրեանց. —Զեկեղեցի սոցա գտի յայնօրինակ խախտեալ, քայքայեալ և յանշուք դրութեան, յորում անհնարին է առնել զժամերգութիւնս մանաւանդ թէ պատարագել. Հինգ ամօք յառաջ քան զայս ունէր եկեղեցիս այս զերկու հարիւր րուբլի գումար, զոր ըստ լուծման Սինոդի Խաչմազցի Պետրոս բէկն Ղազարեանց ի գործ ածեալ է ի վերայ կառուցման նորոյ եկեղեցւոյ մերձ հնոյն, խոստանալով զպակասորդն հոգալ յիւրմէ սեփհականութենէ . . . .

Յետ պարտուպատշաճն խրատաբանութեան և յորդորանաց զժողովուրդն յաստուածպաշտութիւն և յազգասիրութիւն՝ պատուիրեցի յիշեալ Պետրոս բէկի Ղազարեանց աւարտել զշինութիւն

եկեղեցւոյ ձեռնտուութեամբ ժողովրդականաց, որ և խոստացաւ ձեռնտուել զշինութիւնն զնի Յարութեան. — Բայց անդանօր և զմի Հոգևոր ծխական դպրոց, յեկամուտ նորին նշանակելով զտարեկան հազար հինգ հարիւր րուբլեաց կտակելոց ի հանգուցելոյ Պօղոսէ Ալէքսանեանց ի սոյն նպատակ՝ և զկամաւոր նուէրս ժողովրդոց յերկրային բերոց իւրեանց. այժմ ուսանին ի դպրոցի անդ մանկունք տասն և հինգ, որոց ուսուցանէ միայն զՀայոց լեզու Յարութիւն քահանայն Սափարեանց, զոր Կոնսիստորիայս նշանակեալ է յառժամանակեայ հովուութիւն նոցա մինչ ցձեռնադրութիւն սեփհական քահանայի իւրեանց.

Երրորդ՝ յայց եղև և գեղջն Բիլվարու, որ անկանի յարևելահարաւային կողմն Ղուբայու քառասուն վերստ հեռաւորութեամբ, շրջապատեալ գիւղօրէիւք տաճկաց. վարին ընդ միմեանս ի լեզու և ի տարազ կենցաղավարութեան տաճկաց. տունք Հայոց ի սմա են եօթանասուն և չորս, բացի և աստանօր զմի Հոգևոր ծխական դպրոց յեկամուտ նմին նշանակելով զհանգանակեալ ի ձեռն Աշուղեանց Յովսէփ քահանայի և պ. Միրզաջանի Յովհաննէսեանց զնուիրագրամն և տարեկան հարիւր յիսուն րուբլի տուրք Մարդասիրական ընկերութեան Բագուայ. այժմ ուսանին ի դպրոցի անդ մանկունք քսան և մի.

Չորրորդ՝ յայց եղև և քաղաքին Դարբանդու, ուրանօր առ սակաւութեան հայ ժողովրդականաց ոչ գոյր Հոգևոր դպրոց. այլ տեղական Արսէն քահանայն տէր Ղազարեան մասնաւոր իմն եռանդեալ ժողովեալ ի տուն իւր զերկոսեան մանկունս Հայոց ուսուցանէր ձրիապէս զկրօնս, զՀայոց և Ռուսաց լեզու, զՀայոց պատմութիւն, զԹուաբանութիւն և զվայելչագրութիւն. Համաձայն հաւանութեան ժողովրդոց հանգանակեցաւ հազար հինգ հարիւր րուբլի ի շինութիւն երկոսեան դպրոցաց և Առաջնորդարանի ի սրահի նորակառոյց եկեղեցւոյ զնի Յարութեան.

Զեկեղեցի սոյին գտի ի պայծառ և ի բարեվայելուչ դրութեան ըստ ամենայնի և զժողովրդականս ջերմեռանդս յեկեղեցասիրութիւն և յազգասիրութիւն շնորհիւ ուսումնագէտ և բարեբարոյ երիտասարդ Արսէն քահանայի տեղւոյն.

Հինգերորդ՝ յայց եղև և երկոսեան Հոգևոր դըպրոցացն Բագուայ քաղաքի, զորս գտի ի բարեկարգ և յառաջադէմ վիճակի շնորհիւ Մարդասիրական ընկերութեան Հոգաբարձուաց, մանաւանդ բարեբարոյ և ուսումնագէտ Խորէն քահանայի Միրզաբէկեանց, որ անձնանուիրաբար ծառայէ յառաջադիմութեանց դպրոցացն. Ուսանողք ի տղայոց ծխական Հոգևոր դպրոցի են ութսուն և չորս՝ և ուսուցիչք չորք.

Եկեղեցի սոցա պայծառագոյն ևս է քան զամենայն եկեղեցիս վիճակիս և տուեալ բարեզարդեալ ներդաշնակ և զմայլելի ժամերգութեամբ երաժշտական խմբից, զոր անխոնջ աշխատութեամբ պատրաստեալ է ձայնագրագէտ դպիր Երեմիայն. մինչև գրաւել և ժողովել յեկեղեցի և զօտարազգիս որպէս ականատես եղէ.

Վեցերորդ՝ ծխական օրիորդական դպրոցն գըտանի յառաջադէմ և ի բարեկարգ դրութեան ըստ ամենայնի շնորհիւ օժանդակիչ ընկերութեան տեղւոյս, մանաւանդ Հոգաբարձու և գանձապահ Պ. Յովհաննիսի Խալաֆեանց, որ յօրէ բացման դպրոցի կատարէ զյիշեալ պաշտօնն ամենայն հաւատարմութեամբ և անձնանուէր ծառայութեամբ, զորմէ վստահիմ ասել՝ թէ խարիսխ իմն է հաստատութեան դպրոցիս այսորիկ. ուսանողուհիք ի սմին են եօթանասուն և ուսուցիչք հինգ, որ պարապին բարեխղճաբար։ . . . . .

ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Ի ՆՊԱՍՏ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

ՀԱՅՈՑ ԵՐԵՒԱՆԱՅ.

Երևանայ Հայոց Օրիորդաց Դպրոցին ի նպաստ յանցելում ամի եղած բարեսէր նուիրատուաց և ներկայ տարւոյն սկսեալ տարեկան կանխավճար մի մի նուէր տուող բարեպաշտ անձանց հետևեալ ցուցակը հրատարակել Թախանձանօք խնդրուած է։